

Jerusalem v. Austria, 2001 Application no. 26958/95, Երուսաղեմն ընդդեմ Ավստրիայի, (Մարդու իրավունքների եվրոպական դատարան)

Թեման՝ Զրպարտություն

Ենթաթեման՝ փաստերի վերաբերյալ շարադրանք և գնահատողական դատողություններ

Թեսթը՝ անհրաժեշտությունը

Սանկցիան՝ ֆինանսական

Վճիռը՝ արտահայտվելու ազատության իրավունքի խախտում

Իրավասությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Ավստրիա

Գործի փաստական հանգամանքները

1992թ. Վիեննայի համայնքի խորհրդի նիստի ընթացքում, դիմումատուն ելույթ է ունեցել որպես համայնքի խորհրդի անդամ: Քննարկումը վերաբերում էր համայնքապետարանի կողմից սուբսիդիաների տրամադրմանը մի ասոցիացիայի, որը աջակցում էր ծնողների, որոնց երեխաները ներգրավված էին աղանդների/սեկտաների մեջ: Իր ելույթի ընթացքում դիմումատուն պնդեց, որ երկու ասոցիացիաները/ IPM, VPM/ աղանդներ էին, որոնք ունեին “տոտալիտար բնույթ” և ցուցաբերում էին ֆաշիստական տենդենցներ: Երկու կազմակերպությունները քաղաքացիական հայց ներկայացրեցին դիմումատուի դեմ՝ պահանջելով, որ նրան արգելվի կրկնել հայտարարությունն այն մասին, որ այդ կազմակերպությունները սեկտաներ էին և պարտավոճեցնել նրան հերքելու այդ պնդումը:

Ռեգիոնալ դատարանը արգելեց դիմումատուին կրկնել այդ հայտարարությունները այն մասին, որ այդ երկու ասոցիացիաները տոտալիտար բնույթի սեկտաներ էին: Այն նույնպես պահանջեց, որ վերջինս հերքի այդ պնդումները, և հերքումը տպագրվի մի քանի թերթերում: Դատարանը գտավ, որ այդ հայտարարությունները ոչ թե գնահատողական դատողություններ էին, այլ փաստերի վերաբերյալ հայտարարություններ, որոնք ճանաչվել էին իրականությանը չհամապատասխանող՝ կազմակերպությունների կանոնադրությամբ և այլ ապացույցներով:

Դիմումատուն դիմել է վերաքննիչ դատարան, որն այդ հայտարարությունը չկրկնելու վերաբերյալ որոշումը թողեց ուժի մեջ, սակայն վիճարկեց այլ կարգադրությունները: Դիմումատուն բողոք է ներկայացրել համարելով, որ այդ որոշումը խախտել է իր 10-րդ հոդվածով սահմանված իրավունքը:

Դատարանի վերլուծությունը և եզրակացությունը

Դատարանը գտավ, որ ներպետական դատարանի որոշումը միջամտություն էր դիմումատուի արտահայտվելու ազատության իրավունքին, որը սահմանված էր օրենքով և հետապնդում էր այլոց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու նպատակ: Միջամտության՝ ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ լինելու հարցի վերաբերյալ Դատարանը նշեց, որ դիմումատուն ընտրովի պաշտոնատար անձ է և արտահայտվելու ազատության իրավունքը հատկապես կարևորվում է նրա համար: Մասնավոր անձինք և

ասոցիացիաները իրենց հանրային հսկողությանը ենթակա են դարձրել, երբ մտել են հանրային քննարկումների դաշտ և քանի որ երկու կազմակերպությունները ակտիվ էին հանրային մտահոգության հարցերում, նրանցից մեկը համագործակցում էր քաղաքական կուսակցության հետ, նրանք պետք է ցուցաբերեին հանդուրժողականության առավել բարձր աստիճան քննադատության նկատմամբ: Դիմումատուի հայտարարությունները արվել էին քաղաքական քննարկումների ընթացքում և որոնք, չնայած չունեին ռեզիոնալ պարլամենտի նիստի անձեռնմխելիությունը, ֆորումը համեմատելի էր պարլամենտի հետ, քանի դեռ դրան առնչվում էր մասնակիցների արտահայտվելու ազատության իրավունքը:

Հետևաբար, անհրաժեշտ էին շատ ծանրակիռ պատճառներ արդարացնելու համար միջամտությունը դիմումատուի արտահայտվելու ազատության իրավունքին: Ելույթի նպատակը՝ հակասեկտային խմբերի սուբսիդավորման անհրաժեշտության շեշտելն է, առանց նշելու համապատասխան երկու կազմակերպությունների անվանումները այդ փուլում, դիմումատուն հայտնել է կարծիք, որ սեկտաները ունեն տոտալիտար բնույթ: Ավելի ուշ իր ելույթի մեջ նա քննադատել է կազմակերպություններից մեկի և քաղաքական կուսակցության համագործակցությունը: ՄԻԵԴ-ը նշեց, որ ներպետական դատարանները դիտել են դիմումատուի հայտարարությունները որպես փաստերի վերաբերյալ հայտարարություններ, բայց ՄԻԵԴ-ի կարծիքով դրանք գնահատողական դատողություններ են եղել:

Այնուհետև, Դատարանը քննարկեց այն հարցը, թե արդյոք բավարար փաստական հիմքեր առկա են եղել այդ հայտարարությունների համար, քանի որ գնահատողական դատողությունը առանց դրանք պաշտպանող որևէ փաստական հիմքի և կարող է լինել չափազանց:

Դիմումատուի գնահատողական դատողության փաստական հիմքերի կապակցությամբ Դատարանը նշեց, որ դիմումատուն ցույց է տվել փաստաթղթային ապացույցներ, որոնք պրիմա ֆասի ցույց էին տալիս, որ գնահատողական դատողությունները արդարացի մեկնաբանություններ էին, սակայն ռեզիոնալ դատարանը հրաժարվել է ընդունել այլ ապացույցներ, համարելով, որ դրանք եղել են ոչ վերաբերելի: Ինչպես որ պարզաբանել է վերաքննիչ դատարանը, առաջարկված ապացույցները վերաբերում էին միայն սեկտա եզրույթին, և ոչ թե այն եզրույթին, որը դիմումատուն օգտագործել է իր ելույթում: Նման ապացույցները դիտվել են որպես ոչ վերաբերելի:

Դատարանը գտավ, որ նման տարբերակումը արհեստական էր և անտեսում էր դեբատի իրական բնույթը: Պահանջելով դիմումատուից ապացուցել իր հայտարարությունների ճշմարտացիությունը, միաժամանակ զրկելով նրան ապացույցներ ներկայացնելու արդյունավետ հնարավորությունից՝ Ավստրիական դատարանները սահմանազանցել են իրենց հայեցողական լուսանքցքը: ՈԻՍտի, ներպետական դատարանի որոշումը անհամաչափ միջամտություն է եղել դիմումատուի արտահայտվելու ազատությանը:

Հետևաբար, ՄԻԵԴ-ը ճանաչել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: